Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 5-ի N 736-Լ որոշման

## ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### ԲԱԺԻՆ 1.

### ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

**Ռազմավարական ուղղություն 1.** Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման հետևանքների մասին բնակչության իրազեկում

**Ակնկալվող արդյունքներ՝**

1.1. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման վնասների և հետևանքների վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացում.

1.2. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պետության քաղաքականության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացում.

1.3. Թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների (վարքային և սոցիալ–հոգեբանական) վերաբերյալ համապարփակ վարչական տվյալների շտեմարանի, ինչպես նաև հետազոտության արդյունքներով հավաքագրված՝ սեռի և տարիքի հիմքով դասակարգված տվյալների առկայություն.

1.4. Լրագրողների՝ ոլորտին առնչվող իրադարձությունների լուսաբանման կարողությունների բարելավում, ներառյալ՝ կապված զգայուն լուսաբանման, խտրական ու խարանի հանգեցնող ձևակերպումների կիրառման և պատմույթների տարածման բացառման հետ.

1.5. Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ անհանդուրժողականության և խտրական վերաբերմունքի նվազում:

| N | Գործողություն | Թիրախ՝ ըստ տարիների | | | Արդյունքային ցուցանիշներ | Պատասխա-նատու/համա-կատարող մարմիններ | Ֆինանսա-վորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2025թ. | 2026թ. | 2027թ. | | | |
| 1. | Զանգվածային լրատվության և տեսալսողական մեդիայի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ | **1-ին կիսամյակ՝**<br><br>1.1. Թմրամիջոցների | 1.1. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության | 1.1. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության | 1.1. Մշակվել, թիրախային լսարանի շրջանում փործարկվել և | **Ներքին գործերի նախարարութ յուն** | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացվող միջոցառումների համակարգային լուսաբանում | ապօրինի շրջանառության դեմ իրականացվող միջոցառումների վերաբերյալ մշակվել է 2 տեղեկատվական նյութ:<br><br>1.2. Պատրաստվել և տեղեկատվական հարթակներում տեղադրվել է թեմատիկ 2 նյութ:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>1.3. Տեղեկատվական նյութերը փործարկվել են թիրախային լսարանի շրջանում և հեռարձակվել են:<br><br>1.4. Իրավասու մարմինների և կազմակերպություններ ի պատասխանատու ներկայացուցիչները մասնակցել են 2 մամուլի ասուլիսի: | դեմ իրականացվող միջոցառումների վերաբերյալ մշակվել, թիրախային լսարանի շրջանում փործարկվել և հեռարձակվել է 2 տեղեկատվական նյութ:<br><br>1.2. Իրավասու մարմինների և կազմակերպությու նների պատասխանատու ներկայացուցիչներ ը մասնակցել են 2 մամուլի ասուլիսի:<br><br>1.3. Պատրաստվել և տեղեկատվական հարթակներում տեղադրվել է թեմատիկ 2 տեսանյութ: | դեմ իրականացվող միջոցառումների վերաբերյալ մշակվել և հեռարձակվել է 2 տեղեկատվական նյութ:<br><br>1.2. Իրավասու մարմինների և կազմակերպությու նների պատասխանատու ներկայացուցիչներ ը մասնակցել են 2 մամուլի ասուլիսի:<br><br>1.3. Պատրաստվել և տեղեկատվական հարթակներում տեղադրվել է թեմատիկ 2 տեսանյութ: | հեռարձակվել է 6 տեղեկատվական նյութ:<br><br>1.2. Իրավասու պետական մարմինների պաշտոնական սոցիալական ցանցերով և զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է 6 մամուլի ասուլիս:<br><br>1.3. Իրավասու պետական մարմինների պաշտոնական սոցիալական ցանցերով տարածվել է 2 տեսանյութ:<br><br>1.4. Տեղեկատվական նյութերը մշակվել են ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի և Առողջապահության միջազգային կազմակերպության կանխարգելման չափանիշներին համապատասխան՝ բացառելով թմրամիջոցներ գործածող և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումներ և | Քննչական կոմիտե (համաձայնությ ամբ)<br><br>Գլխավոր դատախազությ ուն (համաձայնությ ամբ)<br><br>Արդարադատո ւթյան նախարարությ ուն<br><br>Պետական եկամուտների կոմիտե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | խնդիրներ (վարքային և սոցիալ-հոգեբանական) ունեցող անձանց խարանավորումը:<br><br>1.5. Ապահովվել է տեղեկատվական նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: | | |
| 2. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման վնասների և վնասների նվազեցման կամ արձագանքման եղանակների վերաբերյալ տեղեկատվական արշավների իրականացում | **1-ին կիսամյակ՝**<br><br>2.1. Մշակվել են տեղեկատվական արշավի նյութերը:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>2.2. Տեղեկատվական արշավի նյութերը փորձարկվել են թիրախային խմբերի մասնակցությամբ՝ ստուգելով դրանց արդյունավետությունն ու զգայունությունը:<br><br>2.3. Տեղեկատվական արշավի նյութերը տարածվել են սոցիալական | 2.1. Մշակված նյութերը տարածվել են սոցիալական ցանցերով և հեռարձակվել են տեսալսողական մեդիայով:<br><br>2.2. Մշակված ևս 100 պաստառ փակցվել է Երևանում և մարզերում: | **1-ին կիսամյակ՝**<br><br>2.1. Տեղեկատվական արշավի շրջանակներում մշակվել է ևս 2 տեղեկատվական նյութ, 2 տեսանյութ, 2 տարբեր պաստառ:<br><br>2.2. Տեղեկատվական արշավի նյութերը փորձարկվել են թիրախային խմբերի մասնակցությամբ՝ ստուգելով դրանց արդյունավետությունն ու անվտանգությունը:<br><br>**2-րդ կիսամյակ՝** | 2.1. Տեղեկատվական արշավի շրջանակներում մշակվել և տարածվել են առնվազն 6 տեքստային նյութ, 6 տեսանյութ, 4 տարբեր թեմատիկ պաստառներ, որոնց առնվազն 300 օրինակը փակցվել է Երևանում և մարզերում, իսկ պաստառների թվային ձևաչափը՝ սոցիալական ցանցերում պատասխանատու մարմինների հարթակներում:<br><br>2.2. Տեղեկատվական արշավը հիմնված է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի վերաբերյալ գիտականորեն հաստատված | **Առողջապահության նախարարություն**<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ցանցերով և հեռարձակվել են տեսալսողական մեդիայով:<br><br>2.4. Մշակված 100 պաստառ փակցվել է Երևանում և մարզերում: | | 2.3. Մշակված նյութերը տարածվել են սոցիալական ցանցերով և հեռարձակվել են տեսալսողական մեդիայով:<br><br>2.4. Մշակված 100 պաստառ փակցվել է Երևանում և մարզերում: | տեղեկության վրա և ներառում է դրանց առողջական (ներառյալ՝ հոգեբանական) և սոցիալական վնասների վերաբերյալ տեղեկություն:<br><br>2.3. Տեղեկատվական արշավի շրջանակներում մշակված տեսանյութերից առնվազն մեկը վերաբերում է հանրային առողջության տեսանկյունից առկա խնդիրներին, այդ թվում՝ կապված թմրամիջոցների ներարկային օգտագործման վտանգների հետ:<br><br>2.4. Տեղեկատվական արշավի նյութերը փորձարկվել են թիրախային խմբերի մասնակցությամբ՝ ստուգելով դրանց արդյունավետությունը և անվտանգությունը՝ հաշվի առնելով որպես գովազդ ծառայելու կամ թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ անհանդուրժողականությու ն հարուցելու ռիսկերը: Իրականացված | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | փորձարկումների հիման վրա տեղեկատվական նյութերը լրամշակվել են:<br><br>2.5. Ապահովվել է տեղեկատվական նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: | | |
| 3. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ սեռի, տարիքի և բնակության վայրի հիմքով դասակարգված տվյալների հավաքագրում | 3.1. Մշակվել է սեռի հիմքով դասակարգված տվյալների հավաքագրման նպատակով իրականացվող հետազոտության մեթոդաբանությունը: | 3.1. Հետազոտությունն իրականացվել է: | **1-ին կիսամյակ՝**<br><br>3.1. Հետազոտության վերաբերյալ ամփոփ զեկույցը հրապարակվել է:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>3.2. Հետազոտության վերաբերյալ պատրաստվել և սոցիալական ցանցերով տարածվել են տեղեկատվական 4 նյութ, 1 տեսանյութ: | 3.1. Հետազոտությունն իրականացվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի չափանիշներին համապատասխան:<br><br>3.2. Հետազոտությունը ներառում է տվյալներ հանրության շրջանում թմրամիջոցներ գործածող անձանց թվի կամ հարաբերակցության, անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման վերաբերյալ՝ տարանջատված ըստ բնակության վայրի (գյուղական և քաղաքային) և եկամուտի: | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Վիճակագրական կոմիտե (համաձայնությամբ) | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 3.3. Հետազոտության վերաբերյալ մշակվել և տարածվել են տեղեկատվական 4 նյութ, 1 տեսանյութ: | | |
| 4. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման, դրանց ապօրինի շրջանառության, թմրամիջոցների գործածման կանխարգելման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների բուժման կամ վարքային և սոցիալ-հոգեբանական խնդիրների հաղթահարման վարչական տվյալների համապարփակ շտեմարանի մշակում, որը կներառի սեռի, տարիքի և բնակության վայրի հիմքով դասակարգված տվյալներ | 4.1. Շտեմարանի վարման լիազորող նորմ սահմանող՝ օրենսդրական փոփոխությունների նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:<br><br>4.2. Նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: | **1-ին կիսամյակ՝**<br><br>4.1. Մշակվել և ընդունվել է վարչական շտեմարանում ներառվող տվյալների ցանկը և դրա վարման կարգը սահմանող Կառավարության որոշումը:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br>4.2. Մշակվել է էլեկտրոնային շտեմարանի վարչական բնութագիրը: | **1-ին կիսամյակ՝**<br><br>4.1. Էլեկտրոնային շտեմարանը գործարկվել է: | 4.1. Օրենսդրական փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>4.2. Վարչական տվյալների շտեմարանում ներառվող տվյալների ցանկը և դրա վարման կարգը սահմանող Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>4.3. Էլեկտրոնային շտեմարանը գործարկվել է և պարբերաբար թարմացվում է:<br><br>4.4. Էլեկտրոնային շտեմարանում առնվազն ներառված են ապաանձնավորված տվյալներ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի, դատապարտվածների թվի, կիրառված պատժատեսակների, | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «թմրամոլություն» ախտորոշումն ստացած անձանց քանակի (ըստ սեռի, տարիքի տարանջատման), նման ախտորոշմամբ անձանց թվի աճի կամ նվազման դինամիկայի, սոցիալական ծառայություններ ստացող անձանց (ըստ սեռի, տարիքի, բնակության վայրի տարանջատման) վերաբերյալ:<br><br>4.5. Էլեկտրոնային շտեմարանը հնարավորություն է տալիս հետազծելի դարձնել թմրամիջոցներ գործածած անձի՝ պետական համակարգի տարբեր մարմիններին առնչության շղթան՝ միաժամանակ ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը: | | |
| 5. | Թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված իրադարձությունների լուսաբանման | 5.1. Լրագրողների դասընթացի նյութերը մշակվել են:<br><br>5.2. Կազմակերպվել է 1 հանդիպում կամ սեմինար- | 5.1. Կազմակերպվել է 1 հանդիպում կամ սեմինար-քննարկում պետական մարմինների և հասարակական | 5.1. Կազմակերպվել է 1 հանդիպում կամ սեմինար-քննարկում պետական մարմինների և հասարակական | 5.1. Կազմակերպվել է առնվազն 3 հանդիպում կամ սեմինար-քննարկում լրագրողների համար՝ պետական մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպությունների | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Առողջապահության | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | առանձնահատկությունների և այս ոլորտներում պետության քաղաքականության վերաբերյալ լրագրողների իրազեկվածության բարձրացում, գործունեության զգայունության խթանում | քննարկում պետական մարմինների և հասարակական կազմակերպություններ ների ներկայացուցիչների հետ:<br><br>5.3. Վերապատրաստվել է առնվազն 10 լրագրող: | կազմակերպություններ ների ներկայացուցիչներ ի հետ:<br><br>5.2. Վերապատրաստվել է առնվազն 20 լրագրող: | կազմակերպություններ ների ներկայացուցիչներ ի հետ:<br><br>5.2. Վերապատրաստվել է առնվազն 20 լրագրող: | ներկայացուցիչների մասնակցությամբ: Լրագրողներին ներկայացվել են թմրամիջոցների գործածման կանխարգելման, բուժման և սոցիալական վերականգնման, ինչպես նաև քրեաիրավական պայքարի ոլորտներում պետության քաղաքականության ուղղությունները, պետության և ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից տարվող հիմնական աշխատանքները:<br><br>5.2. Վերապատրաստման նյութերը կազմվել են միջազգային ստանդարտներին համապատասխան և ներառում են ոլորտային հիմնական հասկացություններին, թմրամիջոցներ գործածող անձանց առնչվող խտրականության և խարանի բացառմանը, զգայուն տերմինաբանության | նախարարություն<br><br>Քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կիրառմանն առնչվող թեմաներ:<br><br>5.3. Վերապատրաստման ավարտին իրականացվել է մասնակիցների գիտելիքների գնահատում: | աշխատակազմ (համաձայնությամբ) | |
| 6. | Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառմանն ուղղված տեղեկատվական արշավի իրականացում | | **1-ին կիսամյակ՝**<br><br>6.1. Մշակվել են տեղեկատվական արշավի նյութերը:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>6.2. Տեղեկատվական արշավի նյութերը փործարկվել են թիրախային խմբերի մասնակցությամբ՝ ստուգելով դրանց արդյունավետությունն ու անվտանգությունը: | 6.1. Մշակված նյութերը տարածվել են սոցիալական ցանցերով և հեռարձակվել են տեսալսողական մեդիայով: | 6.1. Տեղեկատվական արշավի շրջանակներում մշակվել և տարածվել են առնվազն 2 տեքստային նյութ և 2 տեսանյութ, որոնցից առնվազն մեկը ներկայացնում է անձնական պատմություն՝ անանունության և էթիկայի կանոնների պահպանմամբ:<br><br>6.2. Տեղեկատվական նյութերը համահունչ են խտրականության բացառման վերաբերյալ միջազգային չափանիշներին:<br><br>6.3. Տեղեկատվական արշավի նյութերը փործարկվել են թիրախային խմբերի մասնակցությամբ՝ ստուգելով դրանց արդյունավետությունը և անվտանգությունը՝ հաշվի առնելով որպես գործադ | **Առողջապահության նախարարություն**<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայելու կամ թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ լրացուցիչ անհանդուրժողականությու ն հարուցելու ռիսկերը: Իրականացված փորձարկումների հիման վրա տեղեկատվական նյութերն անհրաժեշտության դեպքում լրամշակվել են:<br><br>6.4. Ապահովվել է տեղեկատվական նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: | | |
| **Ռազմավարական ուղղություն 2.** Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման և չարաշահման կանխարգելում<br><br>**Ակնկալվող արդյունքներ՝**<br>2.1. Ուսումնական հաստատություններում սովորողների՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման առողջական ու սոցիալական հետևանքների և աջակցության մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և արձագանքման գիտելիքների, հմտությունների ու կարողությունների բարելավում.<br>2.2. Անչափահասների և երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում և թմրամիջոցների գործածման նկատմամբ նրանց սոցիալական դիմադրողականության բարձրացում.<br>2.3. Անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների՝ անչափահասների կողմից թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման ու չարաշահման, դրանց վաղ նշանների հայտնաբերման, անչափահասների հետ հաղորդակցության, արդյունավետ ծնողավարության և աջակցման մեխանիզմների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների բարելավում: | | | | | | | |
| 7. | Անչափահասների և երիտասարդների շրջանում ֆոկուս-խմբային քննարկումների անցկացում՝ կապված թմրամիջոցների գործածման հետ | **1-ին կիսամյակ՝**<br><br>7.1. Իրականացվել է առնվազն 1 ֆոկուս-խմբային քննարկում: | 7.1. Իրականացվել է առնվազն 1 ֆոկուս-խմբային քննարկում: | 7.1. Իրականացվել է առնվազն 1 ֆոկուս-խմբային քննարկում: | 7.1. Անչափահասների և երիտասարդների շրջանում իրականացվել է առնվազն 3 ֆոկուս-խմբային քննարկում՝ նվիրված թմրամիջոցների | **Ներքին գործերի նախարարութ յուն** | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գործածման տարածվածությանը, անչափահասների և երիտասարդների շրջանում գործածման առանձնահատկություններին, այս ոլորտում պետական քաղաքականության վերաբերյալ անչափահասների և երիտասարդների իրազեկվածության մակարդակին և կարծիքին, ինչպես նաև հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկներին: 2 ֆոկուս-խմբային քննարկումն անցկացվել է Հայաստանի Հանրապետության մարզերում:<br><br>7.2. Յուրաքանչյուր ֆոկուս-խմբային քննարկման արդյունքում մշակվել է հակիրճ զեկույց, որով ամփոփվել են հավաքագրված խնդիրներն ու առաջարկվող լուծումները: | Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն | |
| 8. | Անչափահասների և երիտասարդների արտաուսումնական զբաղվածության և հանգստի | | **1-ին կիսամյակ՝**<br><br>8.1. Հանրակրթական, | 8.1. Ծրագրերը ներդրվել և իրականացվում են ևս առնվազն 10 | 8.1. Իրականացված հարցումները ներառական են և ընդգրկում են անչափահասների և | **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի** | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպման ծրագրերի անցկացում | | մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություննե րի սովորողների շրջանում իրականացվել են հարցումներ՝ պարզելու համար առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող զբաղվածության, հատկապես սպորտի և հանգստի տեսակները:<br><br>8.2. Հարցումների արդյունքներով մշակվել են համապատասխան ծրագրեր՝ ուսումնական հաստատություննե րում կազմակերպվող խմբակների կամ արտադպրոցակա ն կազմակերպությու նների միջոցով իրականացվող միջոցառումների տեսքով: | համայնքում՝ առնվազն 100 անչափահասների և երիտասարդների մասնակցությամբ: | երիտասարդների կարիքները՝ ըստ սեռի, բնակավայրի (քաղաքային և գյուղական) և տարիքի:<br><br>8.2. Ծրագրերն արտահայտում են իրականացված հարցումների արդյունքները, իրականացվում են առնվազն 20 համայնքներում և դրանց մասնակցել է առնվազն 200 անչափահաս և երիտասարդ: | **նախարարութ յուն**<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությ ուն<br><br>Առողջապահու թյան նախարարությ ուն<br><br>Ներքին գործերի նախարարությ ուն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **2-րդ կիսամյակ՝**<br><br>8.3. Ծրագրերը ներդրվել և իրականացվում են առնվազն 10 համայնքում՝ առնվազն 100 անչափահասների և երիտասարդների մասնակցությամբ: | | | | |
| 9. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատություններում առարկաներ դասավանդող անձանց գիտելիքների և հմտությունների լավարկում | | **1-ին կիսամյակ՝**<br><br>9.1. Մշակվել են վերապատրաստման նյութերը, ծրագիրը և դասավանդման ձեռնարկները:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>9.2. Վերապատրաստվել է 60 ուսուցիչ: | | 9.1. Վերապատրաստման նյութերը, ծրագրերը և դասավանդման ձեռնարկները մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան և ներառում են տարբեր տարիքային խմբերի հետ աշխատանքի առանձնահատկություններ ի, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի տեսակների, վերաբերելի հասկացությունների, դրանց առողջական և սոցիալական վնասների, ինչպես նաև հաղորդակցության, լսարանի հետ | **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ինտերակտիվ աշխատանքի թեմաները:<br><br>9.2. Վերապատրաստվել է 60 ուսուցիչ, որոնք վերապատրաստման ավարտին անցկացված գնահատման արդյունքներով միջինում ցուցաբերել են առնվազն 80% իմացություն: | | |
| 10. | Հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ դասարանների ուսումնական ծրագրերի՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման հետևանքների, արձագանքման եղանակների իրազեկմանն ու դրանց կանխարգելմանն առնչվող դասընթացների ուսումնական նյութերի կատարելագործում | 10.1. «Առողջ ապրելակերպ» դասընթացի 7-9-րդ դասարանների ձեռնարկները լրամշակվել են՝ կատարելագործելով և ավելի երկար դասաժամեր նախատեսելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմանը և կանխարգելմանը, սոցիալական հմտություններին առնչվող թեմաների համար: | | 10.1. Լրամշակված դասագրքերը պիլոտավորվել են ընտրված առնվազն 5 ուսումնական հաստատություններում: | 10.1. «Առողջ ապրելակերպ» դասընթացի նոր ձեռնարկները երաշխավորել են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:<br><br>10.2. Մշակված դասագրքերը համապատասխանում են միջազգային չափանիշներին և թիրախային լսարանի տարիքով պայմանավորված զարգացմանը: Մշակված դասագրքերը և դասավանդման նյութերը, ի թիվս այլնի, ներառում են թմրամիջոցների գործածման կապակցությամբ | **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | շրջապատի ազդեցությանը դիմակայման, աջակցության դիմելու, սթրեսի և տագնապի հաղթահարման թեմաները:<br><br>10.3. Լրամշակված դասագրքերը պիլոտավորվել են առնվազն 5 ուսումնական հաստատություններում, որի արդյունքներով իրականացվել է դրանց արդյունավետության գնահատում: | | |
| 11. | Անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման կանխարգելման, գործածման դեպքում աջակցության տրամադրման վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների, տնօրենների և երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման | | **1-ին կիսամյակ՝**<br><br>11.1. Մշակվել են վերապատրաստման նյութերն ու ծրագիրը:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>11.2. Վերապատրաստվել է ուսուցիչների 5%-ը, տնօրենների 10%-ը ու երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակությու | 11.1. Վերապատրաստվել է ուսուցիչների 10%-ը, տնօրենների 20%-ը ու երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման | 11.1. Վերապատրաստման նյութերը և ծրագիրը մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան և ներառում են թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի տեսակների, վերաբերելի հասկացությունների, դրանց առողջական և սոցիալական վնասների, վաղ շրջանում անչափահասի կողմից թմրամիջոցի գործածման նշանների, աջակցման մեխանիզմների և անչափահասներին | **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**<br><br>**Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների գիտելիքների և կարողությունների զարգացում | | ն իրականացնող կազմակերպությու ների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությու ների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների 20%-ը: | շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությու ների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների 20%-ը: | ուղղորդելու հմտությունների, ծնողների հետ հաղորդակցության առանձնահատկություններ ի թեմաները: Վերապատրաստման նյութերն անդրադառնում են նաև թմրամիջոցների գործածման կանխարգելման հարցում ուսումնական հաստատությունների տնօրենների և դասղեկների դերակատարմանը:<br><br>11.2. Վերապատրաստվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների 15%-ը, տնօրենների 30%-ը, երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք և դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների, պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների և Միասնական սոցիալական ծառայության աշխատողների 40%-ը: Վերապատրաստման ավարտին անցկացվել է գիտելիքների գնահատում: | | |
| 12. | Անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) և խնամատար ծնողների (այդ թվում՝ խնամքի կենտրոններում գտնվող երեխաների օրինական ներկայացուցիչների) համար դասընթացների և այլ իրազեկման միջոցառումների անցկացում | 12.1. Մշակվել են օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար անցկացվող դասընթացների և սեմինար-քննարկումների մեթոդաբանություն ու կիրառվող նյութերը:<br><br>12.2. Իրականացվել է օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողներին դասավանդող կամ սեմինար-քննարկումներն անցկացնող անձանց ուսուցում | 12.1. Անցկացվել է օրինական ներկայացուցիչներ ի և խնամատար ծնողների ուսուցման 1-ական դասընթաց կամ 1-ական սեմինար-քննարկում առնվազն 10 համայնքներում, որոնց մասնակցել է առնվազն 100 օրինական ներկայացուցիչ և խնամատար ծնող, այդ թվում՝ առնվազն 4 համայնքում գործող երիտասարդական կենտրոններում՝ 40 երիտասարդ ծնողների համար: | 12.1. Անցկացվել է օրինական ներկայացուցիչներ ի և խնամատար ծնողների ուսուցման 1-ական դասընթաց կամ 1-ական սեմինար-քննարկում առնվազն 10 համայնքներում, որոնց մասնակցել է առնվազն 100 օրինական ներկայացուցիչ և խնամատար ծնող, այդ թվում՝ առնվազն 4 համայնքում գործող երիտասարդական կենտրոններում՝ 40 երիտասարդ ծնողների համար: | 12.1. Մշակված դասավանդման և սեմինար-քննարկումների անցկացման նյութերը և մեթոդաբանությունը համապատասխանում են միջազգային ստանդարտներին և ներառում են, ի թիվս այլնի, անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման հիմնական պատճառների, գործածման տրենդների, առողջական և սոցիալական հետևանքների, անչափահասների հետ հաղորդակցության ու ծնողավարության սկզբունքների և մեթոդների, համացանցի ռիսկային ռեսուրսներ (կայքեր) մուտք գործելն | **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առնվազն 10 համայնքում: | 12.2. Իրականացվել է օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողներին դասավանդող կամ սեմինար-քննարկումներն անցկացնող անձանց ուսուցում առնվազն ևս 10 համայնքում: | | արգելափակող կամ սահմանափակող համապատասխան հավելվածների հնարավորությունների, օգտակարության և դրանցից օգտվելու կարգի, ինչպես նաև անվտանգ կայքերի թեմաները:<br><br>12.2. Իրականացվել է օրինական ներկայացուցիչներին և խնամատար ծնողներին դասավանդող կամ սեմինար-քննարկումներն անցկացնող անձանց ուսուցում առնվազն 20 համայնքում: Ուսուցման արդյունքում ծրագրի հաջորդ փուլում ներգրավվել են ուսուցման արդյունքներով առնվազն 80% իմացություն ցուցաբերած անձինք:<br><br>12.3. Անցկացվել են դասընթացներ և սեմինար-քննարկումներ առնվազն 20 համայնքում, որոնց մասնակցել է առնվազն 200 օրինական ներկայացուցիչ և խնամատար ծնող, այդ թվում՝ 8 համայնքներում | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գործող երիտասարդական կենտրոններում՝ 80 երիտասարդ ծնող և խնամքի կենտրոններում գտնվող երեխաների օրինական ներկայացուցիչներ: | | |
| 13. | Թմրամիջոցների գործածման և դրա վնասների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և պաստառների տպագրում ու տարածում անչափահասների և երիտասարդների շրջանում | **1-ին կիսամյակ՝**<br><br>13.1. Մշակվել են պաստառներ:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>13.2. Տպագրվել է 500 պաստառ:<br><br>13.3. Մշակվել և տպագրվել է 10.000 տեղեկատվական թերթիկ:<br><br>13.4 . Տեղեկատվական նյութերը փործարկվել են անչափահասների և երիտասարդների շրջանում՝ ստուգելով դրանց արդյունավետությունը, զգայունությունը, թիրախային խմբի | 13.1. Տեղեկատվական թերթիկները տարածվել են և պաստառները փակցվել են անչափահասների և երիտասարդների ուսման, ժամանցի վայրերում, երիտասարդական կենտրոններում: Տեղեկատվական նյութերը տարածվել են նաև սոցիալական ցանցերով: | 13.1. Տպագրվել և անչափահասների և երիտասարդների շրջանում տարածվել է 10.000 տեղեկատվական թերթիկ, ուսման և ժամանցի վայրերում, երիտասարդական կենտրոններում փակցվել է 500 պաստառ: Տեղեկատվական նյութերը տարածվել են նաև սոցիալական ցանցերով: | 13.1. Տեղեկատվական թերթիկները և պաստառները մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան և ներառում են մատչելի տեղեկատվություն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածման առողջական ու սոցիալական հետևանքների, աջակցության և բուժման միջոցների վերաբերյալ:<br><br>13.2. Տեղեկատվական նյութերը փործարկվել են անչափահասների և երիտասարդների շրջանում՝ ստուգելով դրանց արդյունավետությունը, զգայունությունը և թիրախային խմբի հետաքրքրվածությունը՝ հաշվի առնելով որպես գովազդ ծառայելու կամ | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հետաքրքրվածությունը: | | | թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ անհանդուրժողականություն հարուցելու ռիսկերը: Իրականացված փորձարկումների հիման վրա տեղեկատվական նյութերը լրամշակվել են:<br><br>13.3. Ապահովվել է տեղեկատվական նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: | նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | |
| 14. | Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում թմրամիջոցների գործածման սքրինինգային թեստավորման մեխանիզմ ներդնելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում | | **1-ին կիսամյակ՝**<br><br>14.1. Իրականացվել է թեստավորման մեխանիզմի ներդրման հնարավորության և նպատակահարմարության սոցիալական և իրավական ուսումնասիրություն:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>14.2. Ուսումնասիրության վերաբերյալ | | 14.1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների՝ թմրամիջոցների գործածման սքրինինգային թեստավորման մեխանիզմի ներդրման վերաբերյալ ուսումնասիրությունը մշակվել և հրապարակվել է Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում:<br><br>14.2. Ուսումնասիրությունը կատարվել է «Եվրոպական դպրոցների ալկոհոլի և այլ թմրամիջոցների հետազոտության ծրագրի» | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անցկացվել է առնվազն 2 հանրային քննարկում: | | (ESPAD) ու Եվրամիության դեղերի գործակալության (EUDA) ցուցիչների և Եվրոպայի խորհրդի անդամ առնվազն 5 պետության փորձի վերլուծության հիման վրա ու ներառում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ապահովման տեսանկյունից իրավաչափ մեխանիզմի ներդրման վերաբերյալ առաջարկություն:<br><br>14.3. Ուսումնասիրության վերաբերյալ անցկացվել է առնվազն 2 հանրային քննարկում: | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | |
| 15. | Անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) և խնամատար ծնողների համար թմրամիջոցների գործածման և թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված խանգարումների և խնդիրների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների մշակում | **1-ին կիսամյակ՝**<br><br>15.1. Մշակվել են տեղեկատվական թերթիկները:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>15.2. Տեղեկատվական թերթիկները տպագրվել են (4000 օրինակով) և տարածվել են անչափահասների | 15.1. Տպագրվել և անչափահասների օրինական ներկայացուցիչներ ի և խնամատար ծնողների շրջանում տարածվել է ևս 4000 տեղեկատվական թերթիկ: | 15.1. Տպագրվել և անչափահասների օրինական ներկայացուցիչներ ի և խնամատար ծնողների շրջանում տարածվել է ևս 4000 տեղեկատվական թերթիկ: | 15.1. Տեղեկատվական թերթիկները մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան և ի թիվս այլնի, ներառում են մատչելի տեղեկատվություն անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման հիմնական պատճառների, գործածման նշանների, առողջական և սոցիալական | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Առողջապահության | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների շրջանում: | | | հետևանքների, գործածման կասկածի դեպքում անչափահասների հետ հաղորդակցության ու աջակցման մեխանիզմների վերաբերյալ:<br><br>15.2. Մշակվել և տարածվել է 12000 տեղեկատվական թերթիկ: | նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | |
| 16. | Անչափահասների օրինական ներկայացուցիչների և խնամատար ծնողների համար համացանցի ռիսկային ռեսուրսներ (կայքեր) մուտք գործելն արգելափակող կամ սահմանափակող համապատասխան հավելվածների հնարավորությունների, օգտակարության և դրանցից օգտվելու կարգի, ինչպես նաև անվտանգ կայքերի | 16.1. Պատրաստվել է 1 թեմատիկ տեսահոլովակ: | 16.1. Տեսահոլովակը պարբերաբար տարածվել է սոցիալական ցանցերում և տեսալսողական մեդիայում: | 16.1. Տեսահոլովակը պարբերաբար տարածվել է սոցիալական ցանցերում և տեսալսողական մեդիայում: | 16.1. Պատրաստվել է 1 տեղեկատվական տեսահոլովակ, որը յուրաքանչյուր տարվա ընթացքում առնվազն 2 անգամ տարածվել է սոցիալական ցանցերով և տեսալսողական մեդիայով:<br><br>16.2. Ապահովվել է տեղեկատվական նյութերի մատչելիությունը | **Ներքին գործերի նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ տեղեկատվական տեսահոլովակի պատրաստում | | | | հաշմանդամություն ունեցող անձանց համար: | արդյունաբերության նախարարություն | |
| **Ռազմավարական ուղղություն 3.** Դատապարտյալների և ազատությունից զրկված այլ անձանց շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման և չարաշահման կանխարգելում<br><br>**Ակնկալվող արդյունքներ՝**<br><br>3.1. Ազատությունից զրկվածների պահման վայրեր թմրամիջոցներ ապօրինի տեղափոխելու բացահայտված դեպքերի աճ.<br>3.2. Դատապարտյալների կողմից թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու հայտնաբերված դեպքերի աճ.<br>3.3. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման առողջական և սոցիալական հետևանքների, աջակցման մեխանիզմների վերաբերյալ ազատությունից զրկված անձանց գիտելիքների բարելավում: | | | | | | | |
| 17. | Քրեակատարողական հիմնարկների, կալանավորվածներին պահելու վայրերի և ձերբակալվածներին պահելու վայրերի՝ թմրամիջոցների հայտնաբերման տեխնիկական հագեցվածության բարելավում | | 17.1. Իրականացվել է յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի, կալանավորվածներին պահելու վայրի և ձերբակալվածների պահելու վայրի տեխնիկական հագեցվածության գնահատում և կազմվել է ամփոփ զեկույց, որը ներառում է տեխնիկական հագեցվածության բարելավման վերաբերյալ հստակ | 17.1. Գնահատման զեկույցում ներառված առաջարկությունների հիման վրա ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ: | 17.1. Գնահատումն իրականացվել է միջազգային չափանիշների համաձայն և դրա ամփոփ զեկույցը ներառում է յուրաքանչյուր առաջարկության կատարման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսական մանրամասն գնահատական:<br><br>17.2. Կատարվել է գնահատման զեկույցում ներառված առաջարկությունների առնվազն 20%-ը: | **Արդարադատության նախարարություն**<br><br>**Ներքին գործերի նախարարություն**<br><br>**Ազգային անվտանգության ծառայություն**<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | առաջարկություններ: | | | | |
| 18. | Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համար որոշակի պարբերականությամբ թմրամիջոցների գործածման թեստավորում կամ փորձաքննություն անցնելու պարտականություն նախատեսելու և թեստավորման արդյունքները դատապարտյալի հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների գնահատման հարցում օգտագործելու հնարավորության ուսումնասիրում և համապատասխան ինստիտուտի նախատեսում | 18.1. Ուսումնասիրություն իրականացվել է, մշակվել և Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել է դրա արդյունքներն ու առաջարկությունները ամփոփող զեկույց: | **1-ին կիսամյակ՝**<br><br>18.1. Ուսումնասիրության արդյունքներով մշակված օրենսդրական փոփոխություններ ի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:<br><br>**2-րդ կիսամյակ՝**<br><br>18.2. Նախագծերի փաթեթն արժանացել է Կառավարության հավանությանը: | | 18.1. Ուսումնասիրությունը ներառում է միջազգային ստանդարտների և Եվրոպայի խորհրդի անդամ առնվազն 5 պետության վերաբերելի օրենսդրության վերլուծություն:<br><br>18.2. Օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթի առնչությամբ կազմակերպվել է առնվազն 2 հանրային քննարկում՝ ոլորտային հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:<br><br>18.3. Օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>18.4. Ուսումնասիրությամբ պարտադիր թեստավորում նախատեսելու հնարավորության | **Արդարադատության նախարարություն**<br><br>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | առնչությամբ բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթով սահմանվել է կամավոր թեստավորման ինստիտուտ՝ կամավոր թեստավորման համար խրախուսման գործուն մեխանիզմների նախատեսմամբ: | | |
| 19. | Դատավճռով թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցանքների, ինչպես նաև թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում հանցանք կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ բուժման և սոցիալական վերականգնման ծառայություններ ստանալու պարտականություն ենթադրող անվտանգության միջոց կիրառելու ինստիտուտի նախատեսման անհրաժեշտության և հնարավորության ուսումնասիրում | 19.1. Ուսումնասիրություն իրականացվել է, մշակվել և Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել է դրա արդյունքներն ու առաջարկություններն ամփոփող զեկույց: | | | 19.1. Ուսումնասիրությունը ներառում է միջազգային ստանդարտների և Եվրոպայի խորհրդի անդամ առնվազն 5 պետության վերաբերելի օրենսդրության վերլուծություն:<br><br>19.2. Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել է ուսումնասիրության արդյունքներն ու առաջարկություններն ամփոփող զեկույցը: | **Արդարադատության նախարարություն**<br><br>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | (համաձայնությամբ) | |
| 20. | Ազատությունից զրկված անձանց շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում իրականացնելու նպատակով դասավանդողների ուսուցում | 20.1. Մշակվել են ուսուցման նյութերը, մեթոդաբանությունն ու դասավանդողների համար նախատեսված ձեռնարկը:<br><br>20.2. Ծրագրի հաջորդ փուլում որպես դասավանդող հանդես գալու համար ուսուցում է անցել 5 դատապարտյալ: | | | 20.1. Ուսուցման նյութերը, մեթոդաբանությունն ու դասավանդողների համար նախատեսված ձեռնարկը մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան և ի թիվս այլնի, ներառում են թմրամիջոցների տեսակների, հիմնական հասկացությունների, դրանց գործածման առողջական և սոցիալական հետևանքների, ազատությունից զրկված անձանց դեպքում առկա առանձնահատկությունների, աջակցության մեխանիզմների, հաղորդակցության և լսարանի հետ կապ հաստատելու հմտությունների թեմաները:<br><br>20.2. «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձանց ուսուցման նյութերը ներառում են նաև | **Արդարադատության նախարարություն**<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կանանց և անչափահասների դեպքում թմրամիջոցների գործածման հետևանքների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություն:<br><br>20.3. Ուսուցում է անցել 5 դատապարտյալ, որոնցից ծրագրի հաջորդ փուլում որպես դասավանդող ներգրավվել են միայն ուսուցման ավարտին կատարված գնահատման արդյունքներով առնվազն 80% իմացություն ցուցաբերած անձինք: | | |
